

ֆարեր, որոնք շինութեանց համար շատ յարմար են: Կշանաւոր են նաև կաւի հանքերը, քեւալարու հիւսիսային ստորոտից ստացուած է ընտիր կաւ, իսկ Սօվզուց և Սարըբրից՝ քեւջ:

Կլիման. — Չահարմահաւն իր բարձր և լեռնային դիրքի շնորհիւ առողջարար և բարեխառն կլիմա ունի, որի հետևանքով էլ բնակիչները շատ առողջ են: Այս տեղ ձմեռը դաժան է և խստաշունչ. փշում է բուք ու բորան և սկսում են սառնամանիքներ, և երբեմն այնպիսի օստտիկ ցուրտ է անում՝ որ սառնութեան աստիճանը բարձրանում է 30ի և մինչև իսկ 34 աստիճանի:

Բնդհանրապէս ձմեռն սկսում է հոկտեմբեր 15ից և տևում մինչև մարտ: Այդ ժամանակամիջոցում առատ ձիւն է գալիս և ամբողջ գաւառը ծածկում է ձիւնի հաստ օւռանով և գրեթէ չորս ամիս շարունակ հաղորդակցութիւնը կտրուում է Չահարմահաւից դէպ ի Սպահան, Կոր-Չուրա և այլ տեղեր, որովհետև ճանապարհորդութիւնը դառնում է վտանգաւոր: Շատ անգամ անփորձ ճանապարհորդները ցըրտամահ են լինում: Չմեռը օստտիկ է, նա մանաւանդ այն գիւղերում՝ որոնք ընկած են սարերի մօտ, ինչպէս Դէլչէխ, Մամուքա, Մուշիգան, Սինաթան, Սիրաք, և այլն: Այս գիւղերի կլիման սարերի խիտ ազդեցութեան է ենթարկում: Սարերից փշում են քամիներ, որոնք իրենց հետ առատ ձիւնի հիւտեր են ցած բերում և գիւղերը ծածկում 1-2 մեղք բարձրութեան ձիւնով, որի պատճառով գիւղացիներն իրենց երթևեկութիւնը կատարում են սառն կտուրների վրայով: Մարտի սկիզբներին եղանակը մեղմանում է և սկսում է կանաչ գարունը, որ տևում է մինչև յուլիսի 10ը: Գարնան եղանակը զով է և անոշ, բայց երբեմն գիշերները այնպիսի ցուրտ է անում՝ որ գիւղացիները շատ անգամ քեւում են քուրսիների տակ: Սակայն շնայելով գիշերային այդ ցրտին՝ հովիւներն իրենց հօտերով բարձրանում են օրերը և ծուռ 4-5 ամիս: Ամառը ընդհանրապէս օտթ է, թէև փոխոխական. փշում են հով քամիներ: Բայց շատ անգամ արևմտեան և հիւսիսային ուղղութեամբ փշում են չոր քամիներ և չորացնում հացբոյսերը: Լինում են տարիներ բոլորովին երաշտ, օր. 1916 թւին: Ամառն սկսում է Յուլիսի 10ից և տևում է մինչև Սեպտեմբեր 10ը: Ամառից յետոյ վրայ է գալիս կարճատև աշունը, որ սկսում է Սեպտ. 10ից և տևում է մինչև Հոկտեմբեր 15ը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

Հ Ն Ա Թ Ս Ս Կ Ա Ն

**Կ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը**

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Ց Ք Ո Վ

(Շար. տես Բազմ. էջ 178)

**Գ Գ Ր Ո Ց Ա Կ Ա Ն Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն**

Կը բարդուի և ըստ բազում գլխոց աւելի հետաքրքրական կը դառնայ հոս մեր բնութեան նիւթը: Մեր նախնիք կուտային իրենց զաւակաց մտաւոր սնունդը, ի՞նչ եղանակաւ և ի՞նչ չափով. հարցումներ՝ որոց հարկ է ինձ պատասխանել: Պէտք է կանխում դիտել տալ՝ թէ ուսումնական դաստիարակութեան վիճակը մի ր ազգի մէջ՝ շատ թերի և խառնակ եղած է սովորաբար: Չենք կրնար երևակայել մեր մէջ գոյութիւնը, կամ գէթ հաւասար չափով ու տեղութեամբ, հանրային մտաւոր մշակութեան նպաստող այն ազդեցիկ միջոցներուն, որոցմով ճոխացած էին, և որոց արդիւնքներով կը հպարտանային Յունաստան, Հռոմ, Բիւզանդիոն և ուրիշ ծաղկեալ քաղաքներ: Ի՞նչ ունէինք մեր ուրեմն նոյն նպատակին յարմար: Տեսնե՞ք որքան մեր պատմութեան լոյսը ցոյց կուտայ մեզ:

Ա. — ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կ'ուզեմ առանձին նայիլ ասոր, որովհետև շատ զգալի է խտիրը՝ որ կայ մեր ըզով Աւետարանին նախընթաց ու հետևորդ շրջաններու մէջ: Մտաւոր ի՞նչ շարժում, ի՞նչ մշակոյթ կամ ի՞նչ դպրոցական գործունէութիւն ո՞ւնեցեր է դիցապաշտ և անգիր Հայաստանը, որ պարծեր է միշտ իւր քաղաքակրթութեամբ: Մտախոյզ մը, թանձր մտախոյզ մը կը ծածկէ մեր աչքերէն՝ ինչ որ կը բաղձանք տեսնել: Մեր խորհնացի պատմահայրը, որ կը ստիպուի նոյն ժամանակադին ետև որոնել Հայոց

անցեալ պատմութիւնը, առանց վերապահութեան՝ հոս րատարկութիւն մը թողուած կը համարի մեր նախնեաց կողմանէ, և կ'ըսէ. « Կամիմ և ոչ զանխմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեաց առանց յիշատակի բամբասանաց թողուլ »: Կախանձով մը կ'ակնարկէ ուրիշ ազգաց զբաւոր գանձերուն, և կը շարունակէ իւր բողոքը. « Ամենեցուն մեզ յայտնի է թազաւորացն մերոց և այլոցն առաջնոց առ ի յմաստն աղամարութիւն, և անկատարութիւն ոգւոյն բանականի »<sup>1</sup>:

Հիմնաւոր էր պատմչին տրտունջը: Ինքն իսկ կը պաշտպանէ իւր համոզումը, պատասխանելով անոնց՝ որ կրնային պատճառել նշանաբարց պակասը և անդու պատերազմները, թէ ոսգմէ դադարներն ալ ունեցեր են մեր նախնիք, և թէ կըրնային գործածել Պարսից և Յունաց զիրը, որոցմով արձանագրուեր են ու դեռ կը մնան, կ'ըսէ, մեր մօտ բազմաթիւ մուրհակներ տններու, գիւղերու, գաւառաց, դատերու, դաշանց և մանաւանդ տոհմային պայազատութեանց<sup>2</sup>: Խորհնացուցն այս փաստը բաւական է զմեզ ալ համոզելու, երբ մանաւանդ նկատենք որ եթէ մեր նախնիք կանոնաւոր մատենագրութիւն ունենային, պիտի մնային գէթ անոր նըշխարները, պատմահօր տեսած միւս գրուածոց պէս, և կամ գոնէ ծանօթ և յիշուած պիտի լինէր այտաքին պատմագրերէ, ինչպէս պատահեր է Արտաւազգայ, որոյ մասին ըզէ յետոյ. և վերջապէս տարից գիւտէն վերջ և մեր աշխարհական դարը հաւաքական գրաւոր զգալի գործունէութիւն մը ցոյց չտուաւ արդէն:

Համարինք վայրկեան մը, — թէև որ և է պատմական ապացոյց չունինք, — թէ Հայոց մէջ գոյութիւն ունեցեր է գէթ դիցապաշտական մատենագրութիւն մը, զոր քրիստոնէութիւնը ջնջեց իւր սեմին վրայ. ինչպէս յետոյ Միւրժման ուրացողը, կ'ըսէ Խորենացին, գտած յունարէն գրեցերն այրեց, հրամայելով Հայոց պարսկերէն միայն սովորիլ, որպէս զի խափանէ « զքրիստոնէութեան ուսումն », ըստ որում

« յունականն վարէին եկեղեցւոյ կարգը »<sup>3</sup>. Բացատրութիւնը, որ խորհել կու տան մեզ՝ թէ այրածներն աւելի կրօնական մատեններ էին: Բայց չեմ կարող հաւանիլ ոմանց հետ՝ որ Լուսաւորչի և Տրդատայ նման հելլէն կրթութեամբ զարգացած մտքերը ջնջէին՝ դիցապաշտականին հետ՝ Հայոց ամբողջ գրականութիւնը: Իսկ Մեքրուժան գէթ պարսկերէն գրոց խնայեց, և կորուսած յունականներն ալ ամբողջ չէին, ու չէին կրնար լինել, այլ « զորս միանգամ գտանէր »: Եւ սակայն պատմահայրը չէ տեսեր ոչ մէկ մնացորդը, որովհետև չէին եղած ու չկային:

Արդ՝ մեր այդ հին հարց անտարբերութիւնը գրականութեան հանդէպ, և անոր հետեանք՝ հայ տարից պակասը, կը համոզեն զմեզ՝ թէ հայ ազգը քրիստոնէութենէ յետոյ չէր ունեցեր ո՛ր և է մուտք հանրային դաստիարակութիւն, որոյ պատուղն է եղեր գրաւոր արդեանց պակասն ալ: Բրով Հայաստան չէ տեսեր Ռուսաստանի հասարակաց և առանձնական ուսումնարանները, որոցմով կը ծաղկէր Պարսկաստան անգամ Գեանոփոնի օրով<sup>4</sup>: Այլ կը շատանար այն ընտանեկան չափաւոր քաղաքական ու զինուորական զարգացմամբ, զոր Ռունաց մէջ ալ՝ նախ քան իրենց բարգաւաճումն, և Հոովմայեցոց մէջ մինչև ցկէս կայսերութեան, ամէն ծնողը կու տար իւր զաւակին<sup>5</sup>:

Արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն ունեցող հայ արքունիքը՝ կրնար երբեմն զարտուղի ընդհանուր կանոնէն, և բարի նախանձով իւր որդւոց ապահովել ինամոտ դաստիարակութիւն մը: Ասոր պատուղն հղաւ մեծին Տիրանայ որդին՝ Արտաւազը, հելլենասէր հօր հելլենասէր զաւակ, որ ըստ Պլուտարքոսի՝ գրած էր որբերգութիւններ, ճառեր և պատմութիւններ, որոց մէջ մասը տեսներ է նոյն հելլէն պատմիչը<sup>6</sup>: Եթէ Արտաւազը միակն է իրը

1. Խոր. Ա, 91 — 2. Անդ. — 3. Նոյն՝ Գ, 14, — 4. Կիւր. Ա, 1 — 5. Dar. Educatio, 462, 478, — 6. Զուգ. Արտաւ, 141

ծանօթ ցայտուն դէմք, հաւանօրէն կային ուրիշներ ալ՝ զարգացած փոքր ի շատէ, թէև ոչ մատենագիր:

Մտաւոր դաստիարակութեան չզոյու-  
թեան զլիւարոյ պատճառներէն մին էր արդարև հայ գրին պակասը, — Խորհնացին այս մասին իրաւունք չունի, — որով հայ պատանին չէր կարող զարգանալ իւր բնիկ լեզուով. և դիրին չէր ամենուն՝ օտար լեզուի տիրանալ և անոր ձեռքով թևակոխել զբազանութեան մէջ: Ժամանակ մը փորձ մ'եղած էր յունարէն գրով հայերէն գրելու. բայց հելլէն այբուբենին անբաւականութեան պատճառաւ փորձը ձախողած էր: Աղբոր մնացորդ էր այն հայալեզու հելլենագիր շարադրութիւնը, զոր Գանիէլ ասորի գտած էր, և իբր հայ գրեր տուաւ Ս. Մեծարայ. և կորին կ'ըսէ նոյն նշանազրաց համար՝ թէ «չին բաւական ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզուոյն»: որոյ համար ալ «յայլոց զպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան», այս ինքն անոնց յաջորդել էին ուրիշ օտար լեզուներ ու գրեր՝ Հայաստանի մէջ՝ իրենց գործածութեան անձուկ չափով:

Այսպէս՝ գրին պակասը պատճառ եղած էր զբազանութեան պակասին, և զբազանութեան պակասը՝ գրին. և հայ պատանեկութեան մտաւոր մշակութեան գործը բարձի թողի եղած էր երկար, շատ երկար դարեր:

Բ. — ՀԱՍԱՐԱԿԱՑ ԳՊՐՈՑՆԵՐ

Քրիստոնէութեան պարծանքներէն մին պիտի լինէր՝ հոգեկան բարւոյն հետ մտաւոր բարգաւաճման ալ հաղորդ ընել հայ մտառդ հասակը, հիմնելով առաջին անգամ զպրոցներ անոնց դաստիարակութեան համար: Եւ ինչպէս Աւետարանի լոյսը, այդ կրթարաններն ալ կը պարտինք երկու զարգացած և զգնուական մտքերու, Քրի-

ստոստի և Տրդատայ, որոնք ձեռնհրէց եղան օտակ մեր հայրենիքն այն հելլենակերպ զպրոցներով՝ որոց պտուղն իրենք իսկ վայելելու էին օտարութեան մէջ:

1. — Լուսաւորիչը յետ մկրտելու Հայերը և կազմակերպելու իւր հայրապետական վիճակը, առաջին գործն ըրաւ, կ'ըսէ Ազաթանգեղոս, համոզել թագաւորը զպրոցներ հիմնելու: Ամէն գաւառներէն ու կողմերէն ժողովեցին « ի տեղիս տեղիս բազմութիւն մանկուոյ՝ առ ի նիւթ վարդապետութեան»: Ինչպէս կ'երևի բացատրութեանէ՝ բաւական բազմաթիւ են թէ՛ ուսումնարանք և թէ՛ աշակերտները, որոց զլիւարոյ նպատակն է՝ ըրիստոնէութեան մէջ լաւ հրահանգուիլ, «զաղտ և զժամնզն զշարաւանդոտ դիւացն և զսնտոխագործ պաշտամանցն ի բաց քերել»: Ասոր դիւրաւ հասնելու համար խորագէտ հայրապետը, մանուկներն «անջատել ի հայրենի բնակացն իւրեանց», և կը տանել կը զետեղել իրենց ծննդավայրերէն հեռու զպրոցաց մէջ, որպէս զի բոլորովին մոռնային իրենց ընտանեկան դիցապաշտ սովորոյթները: Այս շինարար գործին մէջ մեծ դեր կը կատարէ Տրդատ, իւր հրամանով իսկ հաւարելով մանկանց բազմութիւնը: Քրիստոնէութեան ամբապնդման դէմ ամենէն վտանգաւոր տարրը կը կազմէին ըլուրերը, որոց ոյժը կոտորուի դիւրամամ՝ առաւելապէս անոնց մտուկները խմբեցին «յարծանաւոր տեղիս՝ դասս դասըս», որոց դաստիարակութեամբ արմատախիլ պիտի ընէին ըրմութիւնը, որ ժառանգական էր Հայոց մէջ:

Առաջին ըրիստոնեայ աշխարհիկ ու միանգամայն զիջեթօթիկ զպրոցներն են աղոնք, որոց պահպանութեան համար կը կարգուի արքունի զանձէն «դարման րոճկաց»: Անոնց ուսման նախկին նիւթն է «արուեստ զպրութեան» կամ այն լեզուաց՝ որոնք պիտի բանային մանկութեան առջև աստուածապաշտութեան կամ ս. Փրոց զըռները: Այդ լեզուները կրկին էին, ասորերէն և յունարէն, որոց երկուքին լուծը միանգամայն ծանր գտնելով թերաւարժ

1. Կօթ. 9.

հայութեան, աշակերտները կը բաժնեն երկու դասի. «զոմանս յատորի դպրութիւն կարգեալ, և զոմանս ի հեւլէն»<sup>1</sup> :

Մեծ է սոյն լեզուաց դերն այդ շրջանի Հայոց քաղաքական ու կրօնական կենաց մէջ, մեծաբերով մին՝ իբրև մերձաւոր, և նախ արտաքին՝ ապա քրիստոնէական գրականութեան մէջ ծաղկած ազգի մը բարբառը. և միւսն՝ իբր հին և ժամանակակից քաղաքակրթութեան և ուսմանց մայր ժողովրդեան մը լեզուն. երկու կառուր բանալիներ՝ բանաւոր ու հոգեւոր զարգացման համար: Երկուքն ալ հաւասարապէս ի գործածութեան են Հայաստանի մէջ, բայց յունարէնն աւելի հին է և ընդարձակ: Ն, Մառ զտաւ Գառնոյ մէջ հեթանոսական մեհեան մը՝ հեւլէն արձանագրով<sup>2</sup>: Նոյն գրով են Արշակունի և ուրիշ հին թագաւորաց բոլոր դրամները: Տրդատ՝ Գառնոյ մէջ կառուցած ամառանոցի վրայ ևս կ'արձանագրէ «հեւլէնացի գրով»<sup>3</sup>: Տեսանք Խորենացւոյն վկայութիւնը՝ թէ քաղաքական գործոց մէջ Հայք կը գործածէին պարսիկ և յոյն լեզուները: Մեծին Ներսեսի օրով դեռ «յունականան վարէին» նաև եկեղեցական պաշտամանց մէջ<sup>4</sup>, ինչպէս սկսած էր Լուսաւորչէն: Յետ Արշակայ գերութեան՝ Մերութան կը ջնջէ մեր երկրէն յունարէնը՝ Պարսից հաճելի լինելու համար<sup>5</sup>: Այդ արգելքը կը կրկնեն պարսիկ վերակացուք իրենց բաժնին մէջ, երբ Պապայ որդւոց ժամանակ Հայաստան կ'ենթարկուի կրկին ազդեցութեանց, և թոյլ կու տան միայն ասորերէնը, մինչ յունական բաժնին մէջ կը տիրէ յունարէնը<sup>6</sup>: Եւ թէպէտ Խոսրովու արքունեաց մէջ վճիռ և հրովարտակ «ասորի և յոյն գրով վճարէին»<sup>7</sup>, բայց հեւլէնագէտը դժուարագիւտ են. այնպէս որ երբ Մեսրոբ, քարտուղար Նոյն լեզուի,

արքունիքէն կը հեռանայ, պարսկերենով միայն կը մնան հոն<sup>8</sup>. Իսկ եկեղեցւոյ մէջ միակ տիրապետողն է այնուհետև ասորին՝ մինչև հայ գրին գիւտը<sup>9</sup>, որ կը հայացնէ եկեղեցական լեզուն ևս: Ստական ասորերէնը կը շարունակէ Գլազայ մենաստանին մէջ, որոյ բնակիչք ասորի էին, մինչև է դար, ուր հայր թորդիկ կը վտարէ օտար տարն ու լեզուն<sup>10</sup>:

Գառնալով Լուսաւորչի դպրոցաց, կ'երևի՝ թէ նա այդ արտաքին լեզուաց ուսուցումն յանձնեց այն «բազմութեան եղբարց»<sup>11</sup> զորս իւր հետ բերաւ կեսաբիայէն, յետոյ քահանայական պաշտօններ տալու Համար անոնց<sup>12</sup>: Շնորհիւ այդ լեզուագիտութեան՝ հայ պատանեկութիւնը քիչ ժամանակի մէջ «մարգարէագէտը և առաքելածանօթը և աւետարանաժառանգը լինէին»<sup>13</sup>: Ուրիշ ուսմանց յիշատակութիւնը չկայ այդ դպրոցաց մէջ. լեզուներն ու ս. Գրոց ծանօթութիւնը բաւական կը համարուի աշակերտութեան, թոյլ տալով որ յետոյ անոնք ինքնօգնութեամբ զարգանան ուրիշ նիւթերու մէջ, կարգալով օտար մատենագրերը:

Այդ ծրագրին ու սահմանին մէջ, որոց պատմականութեան որոշ չափը ճշդելը դժուարին է Ազաթանգեղոսի վիպախառն լեզուէն, մեր անդրանիկ վարժարանը չեն բովանդակիր ու չեն դաստիարակիր ամբողջ հայ մանկութիւնը, այլ անոր մէկ մասը միայն: Սկզբնաւորութիւն ու փորձ մ'է կատարուածը, և ոչ թէ կազմակերպուած ու հաստատուն հանրային կրթութիւն մը: Արդիւնքն է երկու անհատից ջանքերուն՝ որոնք զուրկ են զարգացեալ ազգի մը գործակցութենէն, որով միայն պիտի կարենային համազգային դաստիարակութեան մը ձեռնարկել, և մնայուն հիմերու վրայ դնել զայն:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. ԱզԹ. 625-6. — 2. Արբ. 1911, էջ 69. — 3. Խոր. Բ, 71. — 4. Նոյն՝ Գ, 19. — 5. Անդ. — 6. Նոյն՝ Գ, 19, 87. — 7. Փրբ. 34. — 8. Խոր. Գ, 89. — 9. Փրբ. 86. — 10. Մաժ. 69. — 11. ԱզԹ. 606. — 12. Նոյն՝ 626.

(Շարունակելի)

Հ.Վ.